ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՂԱՆԴԱՇԱՏ ՏԵՍԱԲԱՆԸ ԵՎ ԱԶՆՎԱՐՅՈՒՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆԸ

Դժվար է գրել հրաժեշտի խոսք, որը հերթական անգամ մարդուն հիշեցնում է կյանքի անցողիկության մասին, ու վերստին հիշում ես Հին Կտակարանում զետեղված «Ժողովողի» խոսքերը. «Ունայնություն ունայնության. ամեն ինչ ունայն է: Ի՞նչ օգուտ ունի մարդ իր ողջ չարչարանքից, որ տանջվում է արեգակի ներքո»[1]: Սրանք խոսքեր են, որոնք անցել են քրիստոնեական համաշխարհային գրականության մեծերի՝ Շեքսպիրի, Գրիգոր Նարեկացու գլուխգործոցներով: Ի պատասխան սրա՝ կա մխիթարական ու լուսավոր իրողություն՝ մարդու գործը: Ի՞նչ թողեց մարդն իրենից հետո: Սա առաջին պարտադիր հարցադրումն է, իսկ երկրորդը՝ ինչպե՞ս դրսևորեց իր վարքագիծն իրական կյանքում:

Այս երկու հարցադրումներին ի պատասխան՝ ունենք պատկառելի ու կարևոր գրականագիտական գրքեր, որ թողել է Արամ Պարույրի Գրիգորյանը, և մի լուսավոր կերպար, որն իր բնավորությամբ խիստ ինքնատիպ էր ու առինքնող:

Արամ Գրիգորյանը ծնվել է 1930 թ. սեպտեմբերի 28-ին Թիֆլիսում: Նա ազգակցական կապեր ուներ հայ բանաստեղծական խոսքի շրջադարձային

---

[1] «Ժողովող», 1, 2-3:

դեմք Վահան Տերյանի և նախկին Խորհրդային Միության մեջ շատ հայտնի գրող, թարգմանիչ, կինոսցենարիստ, կոմպոզիտոր ու բարդ Բուլատ Օկուջավայի հետ՝ մոր՝ Աշխենի գծով: Աշխենը 1937-ին բռնադատվել է և աքսորվել Ղազախստանի ***Ալժիր*** կոչվող կանանց ճամբար: 2019-ի հուլիսին ես տեսել եմ այդ սարսափելի տանջարանը, որի թանգարանում կախված է Աշխենի և մանուկ Բուլատի գեղեցիկ նկարը: Նշենք նաև, որ տաղանդաշատ գիտնականը անվանի գրականագետ Լևոն Ներսիսյանի մերձավոր ազգականն էր:



Արա Բեքարյան, Վահան Տերյանի դիմանկարը

Բուլատ Օկուջավան մոր՝ Աշխենի հետ

Ազգակցական կապերն իրենց հրաշալի կնիքն էին դրել Արամ Գրիգորյանի կերպարի ու վարքագծի վրա: Մտերիմները նրան փաղաքուշ ձևով *Արիկ* էին ասում: Նա միջնակարգ կրթությունը ստացել է Թիֆլիսում, այնուհետև ընդունվել և 1953-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի ռուս բանասիրության ֆակուլտետը:

1954-1958 թթ. աշխատել է ռուսալեզու «Կոմունիստ» թերթում՝ որպես գրական աշխատող: Այնուհետև նրա կյանքն ընդմիշտ կապվում է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետ, որտեղ սկսել է

կրտսեր գիտական աշխատողի պաշտոնից ու 1970-ին դարձել նույն ինստիտուտի գրականության տեսության բաժնի վարիչը:

Բեղմնավոր է եղել նրա աշխատանքը Գրականության ինստիտուտում: 1958 թ. «Եղիշե Չարենցի պոեզիան» թեմայով պաշտպանել է ատենախոսություն ու ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Ատենախոսությունը բարձրարժեք ու տարողունակ էր: Դրա հիման վրա հրատարակվեցին Չարենցի ստեղծագործությունը լուսաբանող երկու գրքեր, երկուսն էլ ռուսալեզու: «Հոկտեմբերի երգիչ Եղիշե Չարենցը» լույս տեսավ Մոսկվայում 1959-ին, իսկ «Եղիշե Չարենցի պոեզիան»՝ Երևանում 1961-ին:

Երիտասարդ գրականագետը Հայաստանի ռուսալեզու պարբերականներում եռանդուն հանդես էր գալիս գրականության տեսությանը վերաբերող հոդվածներով: Սա հիմք դարձավ նրա մուտքին ԽՍՀՄ գրողների միության Հայաստանի մասնաճյուղ 1967 թվականից:

Հայաստանի գրողների միությունը խիստ կենսունակ կազմակերպություն էր ու սերտ կապերի մեջ էր ԽՍՀՄ մյուս հանրապետությունների ու հատկապես Մոսկվայի գրողների միության հետ: Կապն ընթանում էր ռուսերենով, փոխադարձ այցելություններով ու համատեղ ձեռնարկներով: Հարկավոր էր Հայաստանի գրողների միության ղեկավարության մեջ ունենալ բազմագիտակ, բարեկիրթ, ռուսերենին քաջ տիրապետող գրող կամ գրականագետ: Ընտրությունը կանգ է առնում Արամ Գրիգորյանի վրա, ու նա 1979-ից մինչև 1987-ը հաջողությամբ վարում էր Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարի կարևոր պաշտոնը:

Երբ ծանոթանում ես Արամ Գրիգորյանի տեսական գրականագիտական գրքերին, համոզվում ես, որ նա ծանոթ էր և ուսումնասիրել էր Արիստոտելի «Պոետիկան», հիանալի գիտեր Բուալոյի կլասիցիզմի տեսությունը, ուսումնասիրել էր Հեգելի, Լեսինգի, Գյոթեի ու եվրոպական ուրիշ նշանավոր մտածողների գրականությանը վերաբերող աշխատությունները, որոնք հիանալի թարգմանված են ռուսերեն: Քաջատեղյակ էր Ալեքսանդր Պուշկինի, Լև Տոլստոյի, Անտոն Չեխովի, Մաքսիմ Գորկու, Վիսարիոն Բելինսկու և իր ժամանակի նշանավոր ռուս գրական տեսաբանների՝ հատկապես Յուրի Լոտմանի կառուցվածքաբանական վերլուծական մեթոդը ներկայացնող հոդվածներին: Բնականաբար, նրա համար հայ գրական տեսաբաններ Միքայել Նալբանդյանը, Եղիշե Չարենցը, Էդվարդ Ջրբաշյանը և մյուսները նույնպես եղել են ուղենիշներ:

Այդ հիմքի վրա մեկը մյուսի հետևից լույս են տեսնում Ա. Գրիգորյանի գրքերը՝ «Գեղարվեստական ոճի պրոբլեմները», «Գեղարվեստական ոճ և պատկերների կառուցվածք», «Գրական ստեղծագործության կառուցվածքի

վերլուծությունը»: Ահա այս երեք գրքերի գնահատականը դարձավ Հայկական ԽՍՀ պետական մրցանակը, որը գրականագետը ստացավ 1985-ին:

Գրականության տեսության դրույթները ուշագրավ ձևով արտահայտված են նաև 1974-ին Երևանում լույս տեսած «Գրականությունը և տեսությունը» գրքում:

Գրիգորյանի արժեքավոր աշխատություններից են նաև «Քննադատությունը և գրական պրոցեսը» (1979), «Ոճային որոնումները և գրական զարգացումը» (1987) և 2004-ին լույս տեսած՝ նորաշունչ «Գրական սեռի ամբողջականությունը» գիրքը: Արամ Գրիգորյանը իր վաստակի ու գրականության տեսության բնագավառի ձեռքբերումների համար 1996-ին արժանացել է Հայաստանի Ազգային ակադեմիայի ակադեմիկոսի պատվավոր կոչման:

Բնավորությամբ թեթևաշունչ անձնավորություն էր, բարյացակամ շրջապատի ու գործընկերների նկատմամբ: Շատ սրամիտ էր: Վերջին տարիներին այցելում էր հայաշատ Լոս Անջելես, սիրում էր զվարճալի պատմություններ պատմել Հայաստանից Լոս Անջելես գնացած հայերի առօրյայից: Գրականագետը ունեցել է ծանր կորուստներ: Վաղաժամ կորցրել էր սիրելի կնոջը այնուհետև որդուն: Սակայն շրջապատի նկատմամբ հարգանքից ելնելով՝ նա երբեք չէր ցուցադրում իր մեծ վիշտը: Ինչպես ասում է ժողովրդական իմաստությունը՝ «Սևը ներս էր անում, սպիտակը՝ դուրս»:

Արամ Գրիգորյանին հիշում եմ այն ժամանակներից, երբ Հայաստանի կոմերիտմիության կենտկոմին կից գործում էր երիտասարդ գիտաշխատողների խորհուրդ, ես դրա անդամն էի: Այն կազմակերպում էր զանազան միջոցառումներ: Նա՝ որպես ավագ տարիքի գիտնական, մշտապես ներկա էր լինում այդ հավաքներին՝ ուրախ ու խոսքաշատ մասնակցություն բերում դրանց:

Երիտասարդական նույն ավյունով Արամ Գրիգորյանը մնաց մինչև կյանքի վերջը, երբ արդեն ես էլ դարձա ՀՀ ԳԱԱ հայագիտության ու հասարակական գիտությունների բաժանմունքի անդամ: Նա իր կենդանի խոսքով աշխուժացնում էր շրջապատին՝ մնալով նույն Արիկը:

Այդպիսին կհիշենք նրան՝ ժպիտը դեմքին, երիտասարդական քայլվածքով, չծերացող ու բարի էությամբ:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

P.S.

Об Араме Паруйровиче Григоряне можно писать и писать: о его неизбывном личностном обаянии, неизменных во времени и пространстве высо-

ких человеческих качествах, о его таланте ученого и исследователя и, наконец, о главном таланте – быть человеком и жить, не поступаясь собственной сутью.

Арам Паруйрович, как никто другой, был наделен даром бережного отношения к людям, столь необходимым в наше непростое время. И этому способствовали тонкий природный юмор, генетическая доброта и непреходящая устремленность, как говорили в старину, к споспешествованию окружающим – друзьям, коллегам и просто добрым знакомым.

Энциклопедическая эрудиция, максимальное погружение в самые глубинные слои исследуемого материала, профессиональный вкус и присущая ему изящная манера изложения создали особое качество его научных работ, в которых пульсирует животворящая сила мысли. Научным исследованиям Арама Григоряна присущи тонкий анализ, свежесть трактовки рассматриваемых проблем и художественных явлений и глубина обобщений.

Его пытливая научная мысль не останавливалась на протяжении десятилетий, и о чем бы он ни писал, будь то кино, театр, литература, обо всем он писал сердцем – проникновенно и честно. Работы Арама Григоряна пронизаны мыслями и чувствами не только научного, но и творческого вдохновения. Его книги давно обрели свои судьбы, ибо в них живет душа автора – ценителя и глашатая Разумного, Доброго, Вечного.

Многолетняя и искренняя дружба связывала моего отца, известного и всенародно любимого драматурга Жору Арутюняна, и Арама Григоряна. Дружба, основанная на взаимном доверии, благоговении и почитании, дружба, проверенная годами, событиями и обстоятельствами, высшим проявлением которой было то, что нередко они могли встретиться, чтобы просто помолчать, однако в сущности это была самая многословная беседа, беседа с пожизненным другом, которого Жора Арутюнян за глаза называл «кристальным человеком».

Имя Арама Паруйровича Григоряна – литературоведа, доктора филологических наук, академика НАН РА золотыми буквами вписано в историю армянской науки и культуры.

ГАЯНЭ АРУТЮНЯН